**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 767 |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Պաշտոնական Ինկորպորացիա (24.07.2010-25.10.2014) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | ՀՀՊՏ 1999.12.27/31(97) |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 22.12.1999 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 22.12.1999 |
| Վավերացնող մարմին | ՀՀ Նախագահ |
| Վավերացման ամսաթիգ | 22.12.1999 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 22.12.1999 |

040.0767.22.99

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
*22 դեկտեմբերի 1999 թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 1999 թվականի N 767
քաղ. Երևան

**ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետությունում անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթերն են`

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող` անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար` նաև ծննդյան վկայականը.

բ) ապաստան հայցողների համար` ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը, փախստականների համար` կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

գ) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար` օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը,

կացության քարտը:

***(1-ին կետը փոփ., խմբ. 01.07.10 N 814-Ն)***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1999 թվականի դեկտեմբերի 22-ից:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ա. Սարգսյան**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |
| 16.02.2017, N 128-Ն | 23.02.2017, N 767 |
| 02.10.2014, N 1064-Ն | 25.10.2014, N 767 |
| 01.07.2010, N 814-Ն | 24.07.2010, N 767 |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |